ԶՎԱՐԹՆՈՑ

Մեր աշխատավոր, աշխատասեր ժողովուրդը իրեն գոյության ընթացքում շարունակ ստեղծագործել է, ստեղծել հոգևոր արժեքներ, նրանցով իմաստալից դարձրել կյանքը, նշանավորել իրեն ապրած ժամանակը։

Մեր նախնիները գալիքի իրենց հետնորդներին թողել են անթիվ հուշարձաններ, աշխատանքի ու արվեստի կոթողներ, որոնց կատարելությամբ մենք այսօր ոչ միայն հիանում կամ հպարտանում ենք, այլև գաղափար ենք կազմում հազարամյակների հեռվում ապրած մեր նախահայրերի կյանքի, գործունեության, ճաշակի և կարողությունների վերաբերյալ։

Հայերի հայրենիքը հատկապես հարուստ է ճարտարապետական հուշարձաններով. այդ հանգամանքով բացատրվում է ոչ միայն այն, որ մեր ժողովուրդը ի սկզբանե եղել է շինարար, հմուտ կառուցող, այլև այն, որ կառուցվածքները՝ բնակարան, թե աշխատանոց, պալատ թե տաճար, եղել են քարակոփ, նրանք դիմացել են ժամանակի քայքայող ուժին և հասել են մեզ մասամբ՝ կանգուն, շատ դեպքերում էլ՝ ավերակ վիճակում, և երբեմն՝ հողով ծածկված։

Դեռ մինչև այսօր էլ գրավոր աղբյուրներում հիշատակվող շատ հուշարձաններ, նույնիսկ քաղաքներ ծածկված լինելով անթափանց հողաշերտով մեզ համար մնում են անհայտ թե՛ իրենց տեղով և թե՛ քաղաքաշինարարական ճարտարապետական-ոճական առումով։

Զվարթնոցը, սկսած իր կառուցման օրվանից, իր վրա է գրավել ժամանակի և հետագա սերունդների ուշադրությունը։ Նրա մասին գրել են մեր միջնադարի շատ պատմիչներ և միշտ բարձր գովեստով նշել նրա եզակի հոյակապությունը, շքեղությունը, բնորոշելով՝ «հրաշալի բազմապայծառ», «աստվածակերտ», «քրիստոսադրոշմ», «հրաշակերտ», «հրաշապայծառ», «զզարմացուցիչն տեսողաց», «զզարմացուցիչն տիեզերաց» և այլ արտահայտություններով։

Հետագայում, կործանվելով, շրջակա բնակիչների համար դառնալով, այսպես ասած, «քարհանք», ծածկվելով հողով ու բուսականությամբ, Զվարթնոցն էլ մեր մյուս կործանված տաճարների նման լռում, մոռացվում է։

Մեր այս դարասկզբում միայն հայտնաբերվում և պեղումներով բացվում է շուրջ 900 տարի անհայտության մատնված հուշարձանի ավերակը, ապա

ավերակում պահպանված որմնահիմքերի, բազմաթիվ բեկորների և մեծաչափ զանգվածների ուսումնասիրության հիման վրա կազմվում է տաճարի երբեմնի պատկերը վերականգնող նախագիծ։

Այժմ Զվարթնոցը աշխարհին հայտնի է դարձել հմուտ գիտնական և մեծ ճարտարապետ Թորոս Թորամանյանի՝ դեռևս 1905 թվականին ստեղծած վերակազմության նախագծով։

Զվարթնոցը կառուցել է հայոց կաթողիկոս Ներսես Գ Շինողը։ Պահպանվել են տեղեկություններ, որ Ներսեսը երիտասարդ հասակում ապրել և ուսանել է Բյուզանդիոնում, դարձել բարձրաստիճան զինվորական և ապա ինչ-ինչ հանգամանքների դրդմամբ թողել է օտար ափերն ու աշխարհական գործերը, վերադարձել հայրենի Տայք, դարձել հոգևորական՝ Իշխանի եպիսկոպոս, կառուցել է հայ ժողովրդի պատմության մեջ մեծ դեր խաղացած Մամիկոնյանների նստավայր, Իշխանաց գյուղի հռչակավոր եկեղեցին։ Որոշակի տվյալների հիման վրա հնարավոր է դառնում ենթադրել, որ Ներսեսը ևս եղել է Մամիկոնյանների անվանի տոհմից։

Վեց հարյուր քառասունական թվականներին արաբական նվաճողական արշավանքները օրըստօրե մոտենում են նաև Հայաստանի սահմաններին և հենց այդ ժամանակներում՝ 641 թվականին Ամենայն հայոց կաթողիկոսական գահ է բարձրանում Ներսեսը։

Արաբների թալանչիական հարձակման հետևանքով Արարատյան դաշտի բնակավայրերում, և հենց մայրաքաղաք Դվինում հայերը զգալի մարդկային զոհեր են կրում։

Ներսեսի գործունեությունը սկսվում է մարտերի ծանր հետևանքների վերացումով՝ հավաքում, հողին է հանձնում դիակները, նրանց հիշատակը հավերժացնող հուշարձաններ է կառուցում և այդ թվում եկեղեցիներ՝ Դվինում և Խոր Վիրապում։

Թորամանյանի հետազոտություններով պարզվում է, որ Ներսեսը Զվարթ-նոցը պետք է հիմնադրած լինի 643 թվականի գարնանը։ Ավելի տարաձայնու-թյուններ կան տաճարի կառուցման ավարտման թվականի վերաբերյալ։ Թորա-մանյանի հիշյալ ուսումնասիրությամբ շինարարության ավարտման ժամանակը 652 թվականն է։

Հայտնի է, որ Բյուզանդիոնի Կոստանդ կայսրը 652 թվականին եղել է Դվինում. հայտնի է նաև, որ Ներսեսը Կոստանդնին հրավիրել է տաճարի օծմանը մասնակցելու։ Յոթերորդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին հաղորդում է, որ կայսր Կոստանդը հավերժորեն հիացած շինվածքով, հրամայում է ճարտարապետին իր հետ գնալ իր մայրաքաղաքը և այնտեղ կառուցել նույնպիսի տաճար։ Սակայն ճարտարապետը ճանապարհին վախճանվում է և կայսրի ցանկությունը մնում է անկատար։

Թորամանյանը տրամաբանում է, եթե տաճարը 652 թվականին հիմնականում ավարտված չլիներ, ինչպե՞ս կարող էին օծել այն և ապա, անավարտ կառուցվածքով միթե՞ կայսրը կհիանար և կվճռեր իր մայրաքաղաքում կրկնել այն։ Ոչ մի հիմնավոր փաստարկ չկա Զվարթնոցի ավարտման թվականը՝ 652-ը չընդունելու համար։ Սրանից ելնելով էլ պետք է զարմանալ, թե ինչու՞ Հնությունների պահպանության կոմիտեն հուշարձանի ցուցատախտակի վրա տաճարի կառուցման ավարտման թվականը նույնացնում է Ներսես Գ Շինողի մահվան թվականի հետ՝ գրելով 661։ Չէ՞ որ տաճարը կառուցվել է 9 և ոչ 20 տարում։

Մինչև Զվարթնոցը պաշտամունքի նշանակության շենքեր Հայաստանում կառուցվում էին ձգված ուղանկյունաձև կամ խաչաձև հատակագծերով։ Թորամանյանի պնդմամբ, Զվարթնոցը բոլորակ հատակագծով առաջին տաճարն է հայոց հողի վրա։

Զվարթնոցը գտնվում է շրջապատի համեմատությամբ փոքր ինչ բարձր տեղում։ Իսկ բուն տաճարի կառուցվածքը տեղադրված է յոթ մեծաչափ աստիճաններով բարձրացված հարթակի վրա։ Տաճարը երևացել է Արարատյան դաշտի շատ կողմերից և մեծ հեռավորությունից։

Զվարթնոցը ներսից խաչաձև է, ստեղծված սյունաշարերով (բացառությամբ արևելյան թևի), իսկ դրսից՝ բոլորակ է, ավելի ճիշտ՝ բոլորակին մոտեցող բազմանկյունի՝ 32 նիստերով։

Բարձրությամբ շենքը եռաստիճան է։ Բոլոր աստիճաններում դեպի վերև հաջորդաբար փոքրացող թմբուկներ են՝ դրված իրար վրա։ Առաջին և երկրորդ աստիճանները ծածկված են թեք տանիքով, իսկ գմբեթաթմբուկը՝ կոնաձև տանիքով։

Տանիքի այս ձևը, համաձայն Թորամանյանի, հատուկ է հայկական հուշարձաններին, թեպետև հետագայում այն ընդօրինակվել է ուրիշների կողմից։

Զվարթնոցի կառուցվածքում գործադրված ճարտարապետական ձևերը շատ հարուստ են։ Ներսից կամարակապ սյունաշարեր են, ճոխ, մեծ արվեստով կերտված խոյակներ, ինչպիսիք են զամբյուղաձև և հուժկու արծվաքանդակ խոյակները, որոնք իրենց նմանը չունեն։ Ներքին խաչաձևը շրջանցող բոլորակ սրահի պատերը մշակվել են վերնամասում միմյանց հաջորդող կամարի ու ճակտոնի նուրբ սյունաշարով։

Տաճարի պատերը դրսից բոլոր երեք աստիճաններում ծածկված են եղել նույնպես սյունակամարաշարով, թեթև, սլացիկ և ակնապարար։ Ըստ որում, առաջին աստիճանի կամարաշարի վերևով անցել է նռի ու խաղողի ճյուղերով, պտղով ու տերևով հյուսված, բարձր ճաշակով կատարված քանդակագոտի։

Հետաքրքիր ու բազմազան քանդակներով շրջանակված են եղել տաճարի նաև առաջին աստիճանի երկրորդ հարկաբաժինը լուսավորող մեծաքանակ կլոր պատուհանները։

Բավական հետաքրքիր ու գրավող տեսք են ունեցել տաճարի (ճարտարապետորեն լավ մշակված) հինգ մուտքերը, դասավորված կառուցվածքի արևմտյան կեսում։ Իսկ արևելակողմից տաճարին կից եղել է մի ուղղանկյուն կառուցվածք, որը թերևս հանդիսացել է ավանդատուն։ Այս վերջինիս հաստահեղույս միջնապատի ներսում էլ, ինչպես ենթադրում ենք այժմ, տեղավորված են եղել շրջանց սրահի երկրորդ հարկաբաժինը՝ վերնահարկ տանող քարակերտ աստիճանները։

Երբ 1905 թվականին Թորամանյանը իր ստեղծած վերակազմությամբ ցույց տվեց, թե կանգուն վիճակում ինչպիսին է եղել Զվարթնոցը, շատերը թերահավատորեն ընդունեցին այն, ոմանք էլ ուղղակի չհամաձայնեցին նրան։

Մեր գրավոր աղբյուրներում պահպանվում է 11-րդ դարի հայտնի պատմագիր Ստեփանոս Տարոնեցու՝ Ասողիկի հաղորդումը, թե Գագիկ թագավորը (989-1020 թթ.) Անիում իրականացրեց իր ցանկությունը և կառուցեց եկեղեցի Վաղարշապատում Ներսեսի կողմից կառուցված Սուրբ Գրիգոր (այսինքն՝ Զվարթնոց) եկեղեցու ճարտարապետությամբ և չափերով։ Պետք է ենթադրել, որ այդ արվել է մինչ այդ կործանված հանրահռչակ Զվարթնոցի պատկերը վերականգնելու և պահպանելու ակնկալությամբ։ Եվ երբ 1906 թվականին գիտնական Նիկողայոս Մառի ղեկավարած արշավախմբի պեղումներով հայտնաբերվում է և հողե ծածկույթի տակից ի լույս է հանվում Գագկաշեն

եկեղեցու ավերակը, հաստատվում է Ասողիկ պատմագրի հաղորդումը, որ Գագիկի կառուցած եկեղեցին ունեցել է Զվարթնոցի ճարտարապետությունը և չափերը։

Այդ ժամանակ, որպես անսպասելի գյուտ, փուլքերի մեջ հայտնաբերվում է Գագիկ թագավորի հսկա չափերի արձանը տաճարի մոդելը ձեռքերի վրա։ Որոշ չափով վնասված մոդելը իր իսկ կոտրտանքներով վերականգնելուց հետո վերականգնվում է Գագկաշենի երբեմնի կանգուն տեսքը։ Միաժամանակ պարզ է դառնում, որ Թորամանյանի վերակազմությամբ Զվարթնոցը հար և նման է Գագկաշենի մոդելին։ Այդ օրվանից էլ Զվարթնոցի՝ գրականության մեջ հայտնի դարձած պատկերը ստանում է հավաստիություն։

Հետագայում, հիսնական թվականներին ճարտարապետության դոկտոր պրոֆեսոր Կուզնեցովի և ճարտարապետության թեկնածու (այժմ դոկտոր) Մնացականյանի կողմից վերանայվում է Թորամանյանի վերակազմությունը և հիմնականում մերժվում։ Այնուհետև ավերակի նոր և ավելի հանգամանալից ուսումնասիրությամբ հնարավոր է դառնում ի հայտ բերել նոր վերակազմություններում տեղ գտած անճշտություններն ու մինչ այդ եղած վերակազմության քմածին մեկնաբանությունը։ Ի վերջո ցույց է տրվում, որ հիմնականում ճիշտ է վաղուց ի վեր ճանաչման արժանացած, բարձր արժանիքներ ունեցող Թորամանյանի վերակազմությունը. այդ վերջինիս մանրամասն վերլուծությունը բերված է Հայպետհրատի 1963 թվականին հրատարակած «Զվարթնոց» մենագրության էջերում։

*

Զվարթնոցի ավերակը, որ գտնվում է Երևանից ընդամենը 20 կիլոմետրի վրա, մատչելի է բոլորի համար։ Ավերակը պահպանվում է պետության կողմից, այնտեղ կա նաև թանգարան, որտեղ ցուցադրված են հուշարձանների լուսանկարներ և Զվարթնոցին նվիրված գրքեր։

Պետք է նկատել սակայն, որ ավերակի բաց օդում գտնվող բեկորները, որոնցից ամեն մեկը իրեն գեղարվեստական արժեքի համար արժանի է առանձին պատվանդանի, թափված են անկանոն, իրար վրա, ուսումնասիրության համար ոչ հարմար դիրքով, ենթակա խոնավության ու քայքայման։

Անհաջող է էքսպոզիցիան նաև կից թանգարանում։ Այնտեղ հիմանականում ցուցադրանմուշի հետ հավասար ձևով ցուցադրված են անանուն, չբացատրված, և նույնիսկ գիտականորեն սխալ կազմված և արդեն մերժված գծագրեր։

Պատշաճ կարգ ու կանոն չկա նաև գրքերի և մյուս ցուցափեղկերում։

Զվարթնոց հուշարձանի այցելուների թիվը օրավուր ավելանում է, հետևաբար, այնտեղ բարեկարգ վիճակի ստեղծումը պետք է համարել անհետաձգելի գործ։

Եթե միջնադարի ականատեսները հիացել են իրապես հրաշակերտ տաճարով երբ այն կանգուն էր, ապա մեր օրերում այն մեզ հուզում է նույնիսկ ավերակ վիճակում։

Հետաքրքրությունը Զվարթնոցի նկատմամբ բավական մեծ է ոչ միայն մեր ծողովրդի, այլ նաև մեծաքանակ ռուս և օտարազգի զբոսաշրջիկների և հատկապես գիտնականների մեջ։

Մենք շատ հուշարձաններ ունենք, կերտված բարձր արվեստով և վարպետությամբ, որոնք նշանակալից տեղ են գրավում համընդհանուր ճարտարապետության պատմության մեջ, սակայն Զվարթնոցը մի այլ, առավել բարձր կարգի ստեղծագործություն է, որի կողքով անտարբեր չի կարող անցնել ոչ ոք, որ ազգից էլ լինի, ինչ մասնագիտության տեր էլ լինի նա։

Զվարթնոցը եզակի երևույթ էր երբ ստեղծվեց, եզակի էլ մնաց իր բարձրության վրա, անկախ այն բանից, որ հետագայում կրկնեցին նրան, նրա նմանությամբ նորերը կառուցվեցին՝ Անիում (Գագկաշեն), Տայքում (Բանակ), Թավուսքիարում [Տայոցքար], Լյակիթում և այլուր։

Հարկ է, որ մեզ հասած այդ եզակի գանձերը հոգատարությամբ պաշտպանենք և անվնաս հանձնենք գալիք սերունդներին։

Տիրան Մարության

15 հունիսի 1966 թ.

Հաղորդվել է հանրապետական ռադիոյով (կարդացել է հեղինակը) արտասահմանի հայության համար նույն թվականի հունիսի 22-ին, ժամը 21.30-ին։